«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածը 6-րդ մասից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ 7-րդ մասով.

«7. 90 և դրանից բարձր տարիքի կենսաթոշակառուի՝ սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված աշխատանքային կենսաթոշակին կարող է տրվել հավելում, որի չափը (այդ թվում՝ ըստ առանձին տարիքային խմբերի) սահմանում է Կառավարությունը։ Սույն մասով սահմանված հավելումը տրվում է կենսաթոշակառուի 90 տարեկանը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից։»։

- Օրենքի 19-րդ հոդվածը 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ 4-րդ մասով.

«4. 90 և դրանից բարձր տարիքի կենսաթոշակառուի՝ սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակին կարող է տրվել հավելում, որի չափը (այդ թվում՝ ըստ առանձին տարիքային խմբերի) սահմանում է Կառավարությունը։ Սույն մասով սահմանված հավելումը տրվում է կենսաթոշակառուի 90 տարեկանը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից։»։

- Օրենքի 21-րդ հոդվածը 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ 3.1-ին մասով.

«3.1. 90 և դրանից բարձր տարիքի կենսաթոշակառուի՝ սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված հաշմանդամության զինվորական կենսաթոշակին կարող է տրվել հավելում, որի չափը (այդ թվում՝ ըստ առանձին տարիքային խմբերի) սահմանում է Կառավարությունը։ Սույն մասով սահմանված հավելումը տրվում է կենսաթոշակառուի 90 տարեկանը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից։»։

- Օրենքի 23-րդ հոդվածը 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. 90 և դրանից բարձր տարիքի կենսաթոշակառուի՝ սույն հոդվածով

սահմանված կարգով հաշվարկված կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակին կարող է տրվել հավելում, որի չափը (այդ թվում՝ ըստ առանձին տարիքային խմբերի) սահմանում է Կառավարությունը։ Սույն մասով սահմանված հավելումը տրվում է կենսաթոշակառուի 90 տարեկանը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից։»։

- Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի՝
- 2-րդ կետում «լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի» բառերը փոխարինել «խնամելու ժամանակահատվածը» բառերով.
- 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1) խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի.»,

- 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած։
- Օրենքի 35-րդ հոդվածը 6-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով.

«6.1. Կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ 90 և դրանից բարձր տարիքի կենսաթոշակառուի Հայաստանի Հանրապետությունում լինելը կարող է հաստատել նաև կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով։»